ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոգիշսթի 1

№ 4616-Ա « 13 » նոյեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑ Հ.49/53 ՇԵՆՔ Հ.6 ԵՎ Հ.6/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ՇԱՂԻԿՅԱՆԻ, ՍՈՖԻ ՖԵԼԻՔՍԻ ԹՈՐԳՈՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ և 28-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 28.10.2025թ. տրված մասնագիտական եզրակացությունը, «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից 22.08.2024թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, հաշվի առնելով ինքնակամ կառույցների չափերի մասին «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից 06.05.2025թ. տրված եզրակացությունները, ինչպես նաև կառույցն իրականացրած անձանց դիմումները (31.01.2022թ. հ.Շ-88 և հ.Շ-89).

1. Երևան, Նոր Նորք, Մոլդովական փողոց հ.49/53 շենք հ.6 և հ.6/1 հասցեներում քաղաքացիներ Ալեքսանդր Սերգեյի Շաղիկյանի, Սոֆի Ֆելիքսի Թորգոմյանի կողմից ինքնակամ իրականացված համապատասխանաբար 63.7քառ.մետր և 48.7քառ.մետր (բնակելի մանսարդային հարկեր) ընդհանուր մակերեսով կառույցները և միջհարկային ծածկի ինքնակամ բացվածքները 2 (երկու) հատ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.07.2018թ. հ.13072018-01-0281 և հ.13072018-01-0280 վկայականներ) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձինք.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 855263 (ութ հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ